Հաստատված է
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2019 թվականի ապրիլի 12-ի նիստում,
արձանագրություն N 10,
գիտական խորհրդի նախագահ,
ռեկտորի պաշտոնակատար

_____ Ռ. Ա. Հայրապետյան

12 _____ 2019 թ.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ (ԾՐԱԳՐԱՅԻՆ) ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով սահմանվում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (այսուհետ՝ ՀՊՏՀ) ուսանողական իրավունքների վերականգնման և ներքին տեղափոխության համար առարկայական (ծրագրային) տարբերությունների հանձնման գործընթացի կազմակերպման և ուսման վճարի հաշվարկման կարգը:

2. Սույն ընթացակարգը մշակված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի (17-րդ հոդվածի 4-րդ կետ), ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի 1240-Ն որոշման հավելվածի և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի 1676-Ն հրամանի հավելվածի հիման վրա:

3. Առարկայական (ծրագրային) տարբերությունը ուսանողի ուսումնառած կրթական ծրագրի ուսումնական պլանում չընդգրկված առարկան կամ որևէ առարկայից կրեդիտների մեկ երրորդից ավելի տարբերությունն է:

II. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

4. Ուսանողական իրավունքների վերականգնումը ուսուցման բոլոր ձևերում թույլատրվում է առաջին կուրսի երկրորդ կիսամյակից սկսած՝ տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) համար լիցենզիայով սահմանված տեղերի շրջանակում:

5. Հեռացված կամ ազատված ուսանողի ուսանողական իրավունքները վերականգնվում են ուսումնառությունն ընդհատելուց առնվազն մեկ կիսամյակ հետո:

6. Առկա ուսուցման համակարգում ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ դիմումները ներկայացվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ կիսամյակների պարապմունքներին նախորդող երեք շաբաթների ընթացքում:

7. Հեռացված կամ ազատված ուսանողի ուսանողական իրավունքների վերականգնումը հրամանագրվում է սահմանված ժամանակացույցով առարկայական տարբերությունները հանձնելուց և ուսման վարձը վճարելուց հետո:

III. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

8. Ուսանողի՝ բուհի ներսում տեղափոխությունը, որի հետևանքով կարող է անցում կատարվել մեկ մասնագիտությունից (կրթական ծրագրից) մյուսը կամ փոխվել ուսուցման ձևը (առկա, հեռակա), իրականացվում է ռեկտորի հրամանով, ուսանողի **անձնական** դիմումի համաձայն:

9. Տեղափոխության մասին ուսանողների դիմումներն ընդունվում են համապատասխան ձևով ուսուցման կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

10. Չի թույլատրվում բակալավրի կրթական ծրագրով առաջին և ավարտական կուրսերում ուսանողի տեղափոխությունը: Մագիստրոսի կրթական ծրագրով տեղափոխությունը թույլատրվում է առաջին կիսամյակի ավարտից հետո:

12. Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է տվյալ մասնագիտության գծով լիցենզիայով հատկացված ընդունելության սահմանային տեղերի (ըստ ուսուցման ձևերի որակավորման աստիճանների) շրջանակում:

IV. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ (ԾՐԱԳՐԱՅԻՆ) ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԻ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ

13. Վերականգնվող ուսանողների առարկայական (ծրագրային) տարբերությունները հանձնելու և ուսման վարձը վճարելու թույլտվության համար տրվում է կցագրման հրաման:

14. Առաջին և երկրորդ կիսամյակներում առարկայական տարբերությունների հանձնումն սկսում է համապատասխանաբար նոյեմբերի և ապրիլի առաջին շաբաթ-

վանից: Համահամալսարանական դասընթացներից տարբերությունների հանձնումը կատարվում է ըստ միասնական ժամանակացույցի:

15. Առարկայական տարբերությունների հանձնումը կազմակերպվում է տվյալ դասընթացից տվյալ կրթաձևում գիտելիքների ստուգման ՀՊՏՀ-ում սահմանված կարգով (համակարգչային-թեստային, բանավոր):

16. Մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը ՀՊՏՀ-ում սահմանված կարգով առարկայական տարբերությունները հանձնելուց (առավելագույնը մեկ վերահանձնման հնարավորությամբ) և 17-րդ ու 18-րդ կետերի պահանջների համաձայն հաշվարկված տվյալ կիսամյակի ուսման վարձը վճարելուց հետո ուսանողը հրամանագրվում է:

17. Ուսանողն ազատվում է ՀՊՏՀ-ում նախկինում կրեդիտներ հավաքած առարկաների ուսումնական պարապմունքներից և ատեստավորումից: Ուսանողը պարտավոր է վճարել միայն այն դասընթացների համար, որոնք ուսումնառելու է տվյալ կիսամյակում:

18. Տվյալ կիսամյակի ուսման վարձը հաշվարկվում է ըստ դասընթացների ընդհանուր գումարային կրեդիտների քանակի՝ հաշվի առնելով ՀՊՏՀ-ում տվյալ կրթական մակարդակի (բակալավրիատ, մագիստրատուրա) համար սահմանված մեկ կրեդիտի արժեքը, բայց ոչ ավելի, քան տվյալ մասնագիտության համար սահմանված կիսամյակային ուսման վարձը (հեռակա ուսուցման դեպքում):

19. Վերականգնմանը (տեղափոխմանը) հաջորդող կիսամյակներում ՀՊՏՀ-ում նախկինում կրեդիտներ հավաքած առարկաների ուսումնական պարապմունքներից և ատեստավորումից ազատվելու ուսանողների դիմումների հիման վրա դեկանը զեկուցագիր է ներկայացնում տվյալ կիսամյակի ուսման վարձի նվազեցման վերաբերյալ:

20. ՀՊՏՀ-ում նախկինում կրեդիտներ հավաքած առարկաների ուսումնական պարապմունքներից և ատեստավորումից ազատվելու վերաբերյալ դիմումներն ընդունվում են տվյալ կիսամյակի ուսումնական պարապմունքները սկսելուց հետո առաջին երեք շաբաթների ընթացքում: Ավելի ուշ ներկայացված դիմումներին ընթացք չի տրվում:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

21. Սույն ընթացակարգն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

22. Սույն ընթացակարգի դրույթները տարածվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և միջազգային շարժունակության ծրագրերի պայմաններին համապատասխան՝ միջհամալսարանական պայմանագրերի շրջանակներում մինչև մեկ կիսամյակ տևողությամբ համալսարանի գործընկեր բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառելու մեկնած և վերադարձած ուսանողների վրա:

23. Սույն ընթացակարգի դրույթները չեն տարածվում տարբեր պատճառներով ուսումնառությունը դադարեցրած (պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդ ձևակերպելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում) և նույն մասնագիտությամբ (կրթական ծրագրով), իսկ դրանք չլինելու դեպքում հարակից մասնագիտությամբ (կրթական ծրագրով) ուսումնառությունը շարունակող ուսանողների վրա:

18.06.2019 արձանագրություն N 12	Գիտական խորհրդի՝ 2019 թվականի ապրիլի 12-ի նիստում (արձանագրություն N 10) հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսանողների վերականգնման, ներքին տեղափոխության, առարկայական (ծրագրային) տարբերությունների հանձնման և ուսման վճարի հաշվարկման ընթացակարգում» լրացում կատարելու մասին